


Օտարաբաղաբայիք զինում են ուղղակի խնայարուժեան հետեւեալ հասցեով.— Во ред. редакцїи «Мерѣ Ахъстану», въ Тифлисѣ, къ редакцїи де «Мегхуи Хаѣстанї», а Тифлисѣ (Caucase).



ՅայտարարումՔիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ
ՅայտարարումՔիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով
ՅայտարարումՔիւններ ընդունվում են խմայադատանը, պլովկաս
հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են
պ. Դանիէլեանի պապիխիումում

քիւն, փրմա օդ Պերսիսկագ քար Յա-
 Սեյիթ-Տուտան, բայց թէ Ղարաբաղու
 մեղքները գործը հոմ օգուտին են վրձ-
 առմ, այդ մասին ոչ մի ապացոյցու-
 թեան թուղթ չը կայ:

Հաս վեճակի մէջ նշանել և այս ինչ անուն անձին հետ ամուսնացնելու որոշումն տալ: Հաճոյ մը օրիորդ Նարկիզ 9 տարեայ եղած ատեն՝ Հայ-րապետ անուն երիտասարդին հետ կը նշանուի «կամքն ծնողաց»: Աղ-ջին հետզհետէ մեծնալով և տեղ-ւոյն դարձնելով յաճախելով և վեր-ջերս ալ Վեգանուէր Հայուհեաց ընկերութեան վարժարանին մէջ իւր ուսումն ըստ կարի աւարտելով դըպ-րոցական յարկին ներքեւ ամենէն յա-ռաջագէտ և բարեկիրթ աշակեր-տուհին կը հանդիսանայ: Աղջկն երբ 15 տարեկան կը լինի՝ կը թողու դըպ-րոցը: Բայց մի և նոյն ժամանակ շատ աւելի խելահաս բնականաբար քան իւր 9 տարեկան հասակին մէջ, իւր ծնողաց կամքէն տարբեր որոշում կուտայ և յիշեալ Հայրապետ անուն անձին հետ բնաւ չ'ուզեր ամուսնա-նալ. ծնողք ևս կը համակերպին աղջկան որոշման: Բայց Հաճոյ 9 օր-պա՛՛՛ն և րը ոչ միայն չ'են հա-մակերպիր, այլ քաղքին մէջ տե-սակ մը աղջային խռովութիւն կը յարուցանեն: Ծնողք կը շփոթնեն տեղւոյն երեւելաց այս տարօրինակ ընթացքին առջեւ և կը դիմեն կա-ռավարութեան: Բայց սա Հ'ուզեր միջամտել խնդիրը իւր շրջանակին դուրս նկատելով: Աղջկը կը յու-զուի ծնողք կը շուարին, կը դիմեն Վիլիկիոյ կաթողիկոսին, սա ալ Բեք-մէզեան կաթողիկոսը կ'ուղարկէ Հա-ճին վնդիրը քննելու և համաձայ-նութեամբ կարգադրութիւն մ'ընե-լու: Համար: Բեքմէզեան կը հասնի նի Հաճին և այս սիրոյ և խաղա-ղութեան պաշտօնայն չը վարանի: 9 օր պա՛՛՛ն և րը ոչ ուն կողմը բռ-նելու: Ծնողք այս անգամ հեռադ-

րաւ ի պատրիարքարան կը դիմեն և այս վերջինն ալ խնդիրը Վիլիկիոյ կաթողիկոսութեան սահմանին մէջ նկատելով չ'ուզեր թէ և միջամտի: Բայց Բեքմէզեայ օրէնքները յիշեց-նելու չափ քաջատարութիւն կու-նենայ: Յուզումը կը մեծնայ, 9 օր-պա՛՛՛ն և րը կատարել և կ'ուզեն ան-պատճառ իրենց որոշումը յարգե-լու: Բեքմէզեան կաթողիկոսը քաջ ու Աւետարանը իւր սուտ վկայու-թեան իբր նշան ցոյց տալու համար բնաւ չը տարակուսիր կառավարու-թեան դուռը: Աղջկան ծնողք եր-ջը ս հեռագրով ի պատրիարքարան կը դիմեն և իր ից ս Վիլիկիոյ կա-թողիկոսին առաջինը հեռագրով դարձեալ կը հրամայէ Բեքմէզեայ օ-րէնքները յարգելու և բռնութիւն ի գործ չը դրուի: Իսկ երկրորդ կը պատահանէ թէ մօտեւ ինք ան-ձամբ Հաճին դալու դիտարու-թիւն ունենալով՝ յայնժամ խըն-դիրը անձամբ կը տեսնուի: Բայց Բեքմէզեան կաթողիկոսը և Հաճոյ 9 օր պա՛՛՛ն և րը իրենց ստանալական յամառութեան վերայ պնդելով և խաժամուժ ամբողջ օգնութեամբ բռնի պատկառութեան արարողու-թիւնը կը կատարեն և կաթողիկոսը կը հրամայէ որ աղջկը և երիտա-սարգը քիչ մ'ալ մ'են ալ թո-ղուին:

Քիչ մ'ալ թողուիք «Արեւելք» լրագրի որ նա շարունակէ: «Տրգա-» տայ և Հոփսիմիայ մեհմարտը «անորոշ կը մնայ... սակայն երկու-» «ձեռն հաս ա՛ն ձիւնք» ներս կը «դիմելին այս նոր Տրգատէսին օգ-» «նութեան հասնելու... Այն ժամ «վերջը ինդ» աղջկը դուրս կը «հանուի այն վեճակին մէջ» յորում

«Թրի պուլէյի աղջկը» Պլանշ-«ճրանսու» թագաւորին ներքա-«սենկէն դուրս կը փախչի» Վիլ-«թո» Հիւկոյի արքայն զգոս-«ն ու» թատերգութեան մէջ: Այս «Հաճոյն» որդերգութեան մէջ ալ «9 օր պա՛՛՛ն և րը կը զգոս-«ն ու» իրենց ձեռքը գործիք ու-«նենալով անամօթ եպիսկոպոս մը «և խաղալի ընելով եկեղեցւոյ ա-«մենասուրբ մէկ խորհուրդը: «Հեռագիր և նամականի հետզհե-տէ սկսան թափել ի Պոլիս» օրագիրը իրենց էջերը բողբոջով լեցուցին և աղջային վարչութիւնը ու կրօնա-կան ժողովը որք սկզբան անտարբեր ձե մը ունէին՝ հասարակաց այս զայնակութեան առջեւ առ երես-գէթ սկսան զարթնուլ, տեսնելը խնդիր ու պիտի հասնի: Կը զու-ցէ կրօնական ժողովը իւր ուսումնա-պի՛՛՛ն՝ ատենապետ Խորէն Նար-Պէյ Սրբազանով թէ այդ խնդիրը Վիլի-կիոյ սահմանաց մէջ տեղի ունենա-լով դուրս է իւր շրջանակէն:

Մենք այնպէս կարծիք թէ ի բացակայութեան աղջային Սրբազան Վիլիոյն Ներսէս Պատրիարքի կրօնա-կան ժողովը զէթ անպաշտօն պէտք էր միջամտել և ուղղակի բանա-լու թեան մտնել մէկ կողմէն: Վիլի-կիոյ կաթողիկոսին հետ կրօնական և միւս կողմէն ներքին գործոց նա-խարարութեան հետ քաղաքականա-պէս աղջային վարչութեան ձեռքով կամ առանձին:

Չը կարծուի պա՛՛՛ն մը թէ մեր նը-պատակը կրօնական ժողովը պարսա-ւել լինի կամ բամբասել, բայց ինչ զուգահեռ է այդպիսի ժողովը մը որ իւր վերջին նիստերէն միոյն մէջ Մշոյ սուրբ Կարապետի վանուց

վանահայր մը ընտրելու համար ե-ղած զանազան առաջարկութեանց մէջ զամեն. Խորիմեան Հայրիկ ա-նարժան համարի է այդ պաշ-տօնին և Կարեգին Սրուանձտեանց վարդապետի համար ալ փախտա-կան ձեռով զուգահեռ է թէ նա պիտի մնայ առաջնորդութեամբ զբաղեալ է: Եթէ Խորիմեան Սրբազան անար-ժան է Մշոյ վանուց վանահայր լի-նելու, ապա ուրիշ անարժան է իւր կոչման՝ ազգ. ժողովը որ զայսպիսի որ կաթողիկոսական երկրորդ ընտրի-լի նշանակեց, զոր յիշմիածին գու-մարեալ Սիմոն թեմաւ Բարեփոխու-թեամբ նոյնը պահեց, որոյ համակ-րած են և համակիր միշտ՝ Ռուսա-հայք և Թրքահայք ստուար մեծա-մանութեամբ և այսպիսի անձ մը տնարժան է նաև սուրբ Կարապետի վանուց վանահայր լինելու: «Եվ դարբ» ո՛վ բարձր զոչեց հին Հռով-մայ անուանի գաւաթ մը և որ աւե-լի մեծ բացառանշուութեամբ պիտի որջուներ զայս սրբալիցոն կրօնական ժողովը թէ իւրեք ներկայ լինել սորա գործոց և գիտակ այն զգաց-մանց, յորմէ թեմապետը շարժի ա-մեն խնդրոյ մէջ նա մանաւանդ յա-ռաջիկայ պատրիարքական ընտրու-թեան խնդրոյն մէջ:

Կարնոյ խնդիրը մի անգամ ընդ միշտ վերջացած պէտք է համարել Կարնոյ խնդիր կրօնական, ըստ որում կարծողներ թեմաւ կան, իրր թէ Հայր Օրմանեան ու է առնչութիւն մ'ունենցած լինի այն որոշման յե-ղափոխականաց հետ, որք քանի մը սուրով և դաշոյնով կը յուսային Տ-Հայաստան օսմանեան ձեռքէն հանել: Հայր Օրմանեան ներքին գոր-ծոց նախարար Էտհէմ-փաշայէ ի

տեսակցութիւն հրաւիրուած լինե-նելով փաշան շատ զո՛հ մնացեր է այդ տեսակցութեան և իւր զոհու-թիւնը յայտնի է նախարարապետ Սայիտ-փաշայի: Այս վերջինն ալ զՕրմանեան իւր մօտ կանգնելով լաւ տպաւորութիւն մ'ունեցեր է նորա զաղափարներէն և խորհուրդներէն և մի քանի օր վերջը որոշուեր է զՕր-մանեան վերադարձնել իւր աթոռը և այս կերպով վերջ տալ Կարնոյ առաջնորդական խնդրոյն:

Մարտի միւս առաջնորդաց վե-րադարձը և ամենէն աւելի առաջ-նորդաց մեծագոյնին վերադարձը կամ նոր ընտրութիւնը, որոց եր-կարաձգումը կրնայ անպատահու-թիւններ ունենալ և լրագրութեան պարտք է մտաւել զայս խնդրոյ որ զերազանց կարեւորութիւն ունի ու-րիշ ամեն խնդրոց վրայ:

Սօսիւն.

Կ Ա Ր Ս

11 օգոստոսի.

Կարսի և Բաթումի ընդարձակ նահանգում Կարս քաղաքում մի-այն մի կանոնաւորեալ հայոց ու-սումնարան էր գտնվում, որ չորս տարիից ի վեր իրր լուստուռ փա-րոս կանգնած այդ երկու ընդարձակ աշխարհների միջում մի քանի լու-սասեր անձանց անձուէր գործու-նելութեան շնորհիւ պիտուէր իւր լոյսը դարձնել խաւարում խաւ-թափող տղէտ ժողովրդի վերայ: Իսկ այսօր ցաւ ի սիրտ յայտնում ենք որ այդ անձուէր անձանց մի քանիսը զանազան հանգամանքների պատճառով հրաժարվում են շա-

«Ոնց չի կարում, այն ասիմ քի, էն վախտ մեր ձորի ձամբէն ըսնց լէն ու բոլ սկընատ չի ըլում, ըլննց նոր չի-նել տվնը, էն վախտը մի նեղ կաման (ուղի) և ըլում, ոնց որ խղարկամայ», Կխտարմոնի 7) ու Շիքարամայ 8) մտե-րը, մի ինչը դուրս մարդ, որ կ'ուղէին էտ մտերում 1000 մարդի վերայ կը-տէին, ըլննց էլ անում ին, Վերջը 0-մար-խանի շիգըր շատ դալիս ա, որ չի կարում ձորը մտնել, հրամաւում ա իր զոյնին, որ գնան քնքրով վրա թափ-վին Հնիվանայ-ձալով 9) պահպանելի վը-րայ, որն էն վիտտը էս ձորի չիմնուց էն մուտս ա ըլում, կոտորին, սրի ըռե-լը քաշին, որ բալքի կարնան ձորը մտնել. ըլննց էլ ըլում ա, մին էլ էն ա դալի խաբարը 10) միւլքներին, թէ 0-մար-խանը Հնիվանայ-ձալով ձորը մտաւ: Միւլքները բրաւոր անելով որ էլ ձոր չունին, թոփ ին անում իրանց ձեռքի տակի մարդկերանցը և յետ քաշվում

գնում Մարանակ 10) ձորը, որտի մէկէլ ըռափտը լրաձեքին ըլում ա արնահե-ղալի կուռ: Միւլքները յաղթվում ին, շատըրը սպանվում ին, շատըրը կսիր ին 1) գնում, շատըրը էլ գլխիկուն ա-ղատած փախչում ին դըս Մահին, Հաղ-բատ և ընտելի միւլքներին հետ խառ-նուած, թաղաղան կուռ տալի Օմար-խա-նի հետ, Հաղբատայ ձորումը սպանվում ա մեր պապիկից խուզավէրդու տղայ խամուղի-բէզը: Ատուած տայ, որ մին-ձանաս Հաղբատ գնալիս ըլիս քի ձամ-փու դրաղին կը պատահի մի գե-ւղման վրէն գրած:

Խաչ օգնեն ինձ:

Մահարձան իմ խամուղի բէզի, Մեկը Լուռու Աղբեհատ գեղի, Թուռն մեծ մեկը Գուրմիլ-խանի, Պատերազմող ընդ Օմար-խանի, Անցորտէդ խնդրիմ ասել Աստուած ո-ղորմի:

Էդ խամուղի-բէզի գիրիզմանը ա իտ խամուղի-բէզի հմար ատու ին. շատ խմատուն մարդ ա ըլում. էն քի-րը, որ է քըր սպանվիլ պտէր, նստած, ատու ին, միւլքներին մէջ, մտիկ արա-րիլ. մտիկ իր ձեռքի ին (ալա) քաշե-

լով ասիլ՝ «Է... ճըռնիք, ճըռնիք, էգուց հեղիկը ճաշը դուք ումըր (կեանք) ու-նեք, ճաշն յետը դուք ունեցիք (գիշա-տիչ թաշուն է) ձեզ վրայ կը նստին. կը քրքրին» (Գնէնց էլ կատարվում ա. գնում ին տէնում՝ սպանված վրէնկած դուք ունեցիք վրէն իտ խամուղի-բէզի հմար մի բան էլ ին ատու):

Ինչ... հարցուց Նիթիմ աշքերին ձիւր քանիլ:

«Մի էրից (քահանայ), ատու ին, թաքուն կաշառք վերցրած ա ըլում թուրքերից, մեր ձորն ձամբէլը նրանց յանց տայ, որ գան թաղանշութիւններ, մարդասպանութիւններ անին, էս բանը խամուղի-բէզը իմանում ա, կանչում ա իրիցին իր կուշտը հարցնում, էրիցը ձեքքին հաշայ ա ուտում, վերջը որ շատ զուռ ա անում, խատունվանվում. որ դրուտ ա ին սնաթին հրամաւում ա իր մարդկերանցը, որ տանին նրան ջուրը գցին խողին, չունքի թուր-քերի փողը լաւ ա հաշվում. քան իր երկրացի, իր հաւատակիցների կեանքը ու արինը, իրիցին տանում ին ջրի դրաղը լինելը քար կապում ու ջրի խոր տեղը գցում խողիում, էն օ-րից տէն ա, որ մի բաղրի կտի գօլի անումը դառնել ա կրիցազօլ:

Քանի որ իրիցազօլ պատմութիւնը դեռ էր լսել Նիթիմ, ընչէնց գիտի թէ Լուռու ամեն մի քար, ամին մի քող, ամին մի սար ու ձոր, էր ու փուս, որ մի մի անում ունին, անմեղ անուաներ ին, բայց չէ, հասկացաւ, որ դրանց ա մին մընի գլխով հաղբ ու մի բան է անցկացիլ, ամին մընը ետքայ պատմու-

թիւններ ունին, և չալի էր գալի չիմու-պատմութիւն էլ սվորիլ Ղօխի-բիձուց, որ մի վախտ էլ ինքը սվորցնէ ուրիշի-ն ըլննց հարցրի:

Ինչ Աղբու «Օղիպարայ» պատմու-թիւնը ոնց ա...:

«Էտ, բաւա ջան սուրբ Օհանէս Օհանցու հրաշքն ա, միւնիմ նրա ոտի տակին, ասու Ղօխի-բիձէն ըլննց խէլ հանելով, Նիթիմ տնելով, նա էլ իր ըլննցին խաչ արաւ. Գիտես ոնց ա էլէլ. մի օր Օհանէս Օհանցին, նրա բարի աղօթքը ըլն քի վրայ ու ալամ (ամբողջ) աշխարհի, ասու Ղօխի-բիձէն խուրը փոխելով, պատարագ անելիս ա ըլում որ օխտը մոնթերով, մին էլ էն ա լուռ, որ մի ինչ ֆըլլոց ա գալի գրից, զը-գում ա իր մոնթերից միշը, որ տէնու-ընչի ֆըլլոց ա, էն մոնթը գնում ա ու գնում էլ յետ չի գալի, զըգում ա վրայ էրկուսին, նա էլ չի գալի, զըգում ա վրայ էրեքին. նա էլ չի գալի, զըգում ա վրայ չորսին. նա էլ չի գալի, ըլննց ցով վրա հինգը, վրա էլիցը, վրա օխտ-ինի զըգում ա, մին էլ ա յետ չին գալի խաբար բերում. վրջը ինքը պատարագ վերջացնում ա դուս ըլում, որ տէնու-մոնթերը ինչ էլան, և ինչ ա տէնում. մի ետքայ հայրաբայ օխտը գոմի հաս-տութեան վրայ օձ մոնթերին կուլ ա տվել ու գալիս ա դըս իրան. ըստի Օհանէս Օհանցին կաշնում ա ու ատում»

«Հրամանաւ Աստուծոյ, հրամայիմ իմ քեզ տղըդ ու տեղը քար դաւ և գաւազանովս որ տեղըդ տամ մօնթերս դուրս գան և տարէն տաս էրկու ամիս տնըդ հատելի ջուրու Օձը էն նմուտին

տեղն ու տեղն քար ա դառնում, գա-ւազանի տված դեղովը դուրս են գալի օխտը մոնթերը միւնում և ջուր Մօնթի-րին ա. Օհանէս Օհանցին տանում ա օձի գէմ ու գէմը թմրի (բարձր) զիւր ու-նեցող տեղ) վրա օխտին իրուր հետ թաղում և վրէններուն մի մինձ քար տնում, ջուրն էլ խում է նա էն օրից տէն ա ձեռմըմալէ (ուտալ) դուրս ա գալի և դիւ ա խոցի ու քոսի Միտըտ պահիր-մի օր որ ուխտ գնալիս ըլիս Սրբան 3) օգնուռ դու հարցում, նա քի շանց կը տայ մոնթերի գրիզմանը:

Բռանց Ղօխի-բիձէն վերջացրուց իր պատմութիւնը, օրը էլ էկէլ թիքվել էր, արեւ մէր մտել. Նիթիմ վիկացաւ հա-ղվեցաւ Ղօխի-բիձու ձեռքը համբու-րից, ձերութեան օրհնալը առաւ ու ձամբայ ընկաւ դըս գեղը:

Մենք էլ սիրելի կարդացող համբու-րենք Ղօխի-բիձու ձեռքը, առնինք նրա օրհնալը ու գնանք մեր Նիթիմ եղի-վից, դրուտ ա պարտական ինք ոտ-նիրներու կտորած միշտ նստած ըլնիլ էս թափուր ձերերի կոկիքին, հարց ու փորձ անել, մեր ազգի, մեր պապերի, մեր կրկններին գլխով անցկացած պատ-մութիւնները լսել, էնի գեղայն լիս աշ-խարհ հանել, մեր որդուց հասկացնել:

(Կը շարունակվի).

6) Խող և խրամ. ահագին. քար. հետեւ. ասպէս այսինքն այսպիսի ճանապարհ, որ անցնում ա է ահագին քարի միջով:

7) Կըղտար և Մուտ. Տեղացի ձերերը պատմում են իրեն թէ այն կնիզանին որտեղից հայտնուած այդ ճանապարհով մտնում է ձորը և ազատվում, նոյն օրից ճանապարհը այդ անունն է ստանում:

8) Եւք. դրամ, այսինքն քայլ տնել, Այդ ճանապարհը մի տեղ մի այսպիսի կըտուած տեղ ունէ, որ անցորդը ստի-պուած պէտք է մեծ քայլ դնէ և թըռ-չէ. ահա այդ պատճառաւ է, որ և կոչ-վում է Եւք. և դրամ (քայլ դրեցի):

9) Հնեվան կը նշանակէ հին վանք, ձալայ. գետի ափին փոքրիկ տափարակ

տեղ նման հովիտի: Հնեվանայ-ձալէն գտնվում է Ղաչաղան կամ Նոր-Ու-ղունթալար գեղի հարևանային կողմը, որ և կան քանի մի կիսաաւերակ վան-քեր:

10) Պատերազմի տեղ.

1) Գերի տարուածները վերջը աղատ-վում ին իւրեանց ազգակիցների ձեռքը, վճարելով իւրաքանչիւրի համար ահա-գին, գումար:

